

ԱՍՈՐԵՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԵՐԿՐՆԵՐԸ
Մ. Թ. Ա. XIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Պատմ. գիտ. դոկտոր Ա.ՐԱՄ ՔՈՍՅԱՆ

Մասնագետներին լավ հայտնի են մ. թ. ա. 1230-ական թվականներին դեպի Հայկական լեռնաշխարհ Ասորեստանի արքա Թուկուլթի-Նինուրտա I-ի (մ. թ. ա. 1234—1197 թթ.) կազմակերպած արշավանքները¹, որոնց ընթացքում լեռնաշխարհի հարավային և հարավ-արևմտյան շրջաններն ընկան Ասորեստանի գերիշխանության տակ:

Առկա ուսումնասիրություններում վերոհիշյալ արշավանքները դիտվել են որպես Ասորեստանի աշխարհակալ պետության հզորության վկայություն, հատկապես նույն արքայի այլ հեռահար արշավանքների ֆոնի վրա²: Արևմուտքում Թուկուլթի-Նինուրտան ասպատակելով հասավ մինչև Նիբրատ՝ Կարգամիսի մոտ, իսկ հարավում նվաճեց Բարելոնիան: Սակայն, որքան հայտնի է, առայժմ վերոհիշյալ իրադարձությունների առնչությամբ չի տրվել հետևյալ հարցը՝ ինչով էին պայմանավորված Ասորեստանի արքայի այս աննախադեպ հեռահար արշավանքները: Հետազոտողները սովորաբար դրանք դիտում են կամ որպես Թուկուլթի-Նինուրտայի նախորդի՝ Սալմանասար I-ի (1263—1234 թթ.) կողմից արդեն նվաճված տարածքների³ վերահաստակեցում, կամ մ. թ. ա. XIII դարի 30-ական թվականներին իր բարձրակետին հասած խեթա-ասորեստանյան հակամարտության ետնախորքում: Թուկուլթի-Նինուրտա ինքը այսպես է հիմնավորում իր արշավանքները, մասնավորապես, դեպի Հայկական լեռնաշխարհ. «Այդ տարում Կազմուլիի երկրի օձ ամբացված Բաղալները, որոնք խաղաղ տարիներին գերեվարել էին իմ մարդկանց և քայլանել իմ երկիր...»⁴, «Ողջ Շուբարի երկիրը, Քաշիյարի լեռն ամբողջությամբ՝ մինչև Ալզի երկիրը, որոնք նախկինում իմ հոր, տիեզերքի արքա Սալմանասարի կառավարման ժամանակ ապստամբել էին և պահել հարկը, միավորվեցին մեկ իշխանության ներքո»⁵:

Առաջին հայացքից, թվում է, մասնագիտական կարծիքները միանգամայն արդարացի են և տվյալ պարագայում գործ ունենք կախյալ տարածքների անհնազանդության և դրան հաջորդած պատժիչ միջոցառումների հետ: Սակայն, մի շարք նկատառումների ճնշման տակ, Թուկուլթի-Նինուրտայի վերոհիշյալ

1 Թուկուլթի-Նինուրտայի հյուսիսային արշավանքների մասին պատմող տեքստերը տե՛ս A. K. Grayson. Assyrian Royal Inscriptions. Vol. 1, Wiesbaden, 1972 (այսուհետև՝ ARI I), §§ 691—694, 701, 707, 713, 773, 783 և այլն; S. Lackenbach. Nouveaux documents d'Ugarit. Une lettre royale.—Revue d'Assyriologie 76, 1982, p. 141—156 (վերջինը Նիսրիայի ճակատամարտի մասին Թուկուլթի-Նինուրտայի նամակն է՝ ուղղված Ուգարիտի արքա Ամմուրապիին):

2 Արշավանքների մասին տե՛ս J. M. Munn-Rankin. Assyrian Military Power 1300—1200 B. C.—In: «Cambridge Ancient History», vol. II, ch. XXV 1967, p. 13ff.; H. B. Apyтyю н ян. Бивнилли (Урапу), Ереван, 1970, с. 21с.л.; I. Singer. The Battle of Nihriya and the End of the Hittite Empire.—Zeitschrift für Assyriologie 75, 1985, p. 100ff.

3 ARI I, § 531.

4 ARI I, § 692.

5 ARI I, § 693.

արշավանքների նպատակների համար առաջարկված մեկնաբանությունները եթե ոչ սխալ, ապա առնվազն պիտի թերի համարել: Այս խնդրի մեկնաբանությունը, մեր կարծիքով, հնարավոր է միայն առաջավորասիական տարածաշրջանի՝ ուսումնասիրվող ժամանակաշրջանի պատմության լայն և տնայնորթ վրա: Ստորև փորձենք ներկայացնել մ. թ. ա. XIII դարի վերջին տասնամյակներում առաջավորասիական տարածաշրջանում նկատվող քաղաքական դարձումների համընդհանուր միտումները:

Սա մի ժամանակահատված էր, որի ընթացքում արդեն որոշակիորեն դգացվում էին «մ. թ. ա. XII դարի ճգնաժամի»⁶ առանձին դրսևորումները՝ ներքաղաքական անկայունություն, բնակչության շարժունակություն հասկացես խոշոր պետությունների ծայրագավառներում: Առաջավոր Ասիայում և էգիպտոսում սկիզբ էր առնում մի պրոցես, որը, տարեցտարի խորանալով, պիտի հասցներ պետությունների քաղաքական և սոցիալ-տնտեսական հասակարգի փլուզման, առնվազն դեգրադացիայի: Հատկանշական է, որ Թուրկոլթի-Նինուրտայի ժամանակաշրջանի Ասորեստանում վկայված քաղաքական գործընթացները իրենց ուղղակի զուգահեռներն ունեն Եգիպտոսի և Նեթալան տերության (հաթթի) համաժամանակյա պատմության մեջ: Ըստ այդմ, փորձենք անցկացնել Առաջավոր Ասիայի վերոհիշյալ երեք առաջատար երկրները պատմության համեմատական ուսումնասիրություն: Դա թույլ կտա հստակ պատկերացում կազմելու ուսումնասիրվող ժամանակահատվածի մասին աշխարհագրական լայն ընդգրկման միջոցով: Այժմ համառոտակի, ընդհանուր գծերով քննարկենք Եգիպտոսի և հաթթի քաղաքական զարգացման միտումները մ. թ. ա. XIII դարի վերջին տասնամյակների ընթացքում:

Ռամզես II-ի հաջորդ Մերենպտահի (մ. թ. ա. 1213—1203 թթ.) կառավարան շրջանը հագեցած էր արտաքին քաղաքական մեծ բարդություններով, որոնց լուծումը պետության բոլոր ռեսուրսների ներդրում էր պահանջում: Իր կառավարման հինգերորդ տարում փարավոնը ստիպված էր արշավել արևմուտք՝ Լիբիայի սահմանները, կանգնեցնելու դեպի Դելտա ընթացող լիբիացիներին և նրանց դաշնակից «ծովի ժողովուրդներին»: Վերջիններիս թվում էին մի շարք ցեղեր՝ rk, srdn, skrs, kwš, irš: Այս իրադարձությունից որոշ ժամանակ անց կազմված մի արձանագրության մեջ Մերենպտահը հայտնում է հետևյալը՝ «Տեխենուն գրավված է, հաթթիում խաղաղություն է, Քանաանը քայտնված է, Աշկելոնը գրավված է, Գեգերը՝ վերցված և Խարայելը՝ ամայացված»⁷: Տեխենու եգիպտացիներն անվանում էին Լիբիան. բնական է նեթալոյի, որ խոսքը փարավոնի հինգերորդ տարում տեղի ունեցած պատերազմի մասին է: Քանաանի, Աշկելոնի, Գեգերի և Խարայելի նվաճումը լուրջ մտորումների տեղիք է տալիս: Մերենպտահի նախորդների օրոք, Պաղեստինն ու Քանաանը գտնվում էին Եգիպտոսի անվիճելի գերիշխանության տակ: Ըստ մ. թ. ա. 1258 թ. խեթա-եգիպտական դաշնագրի, Եգիպտոսի տիրապետությունը տարածվում էր վերոհիշյալ շրջաններից շատ ավելի հյուսիս: Բնականա-

⁶ Այս խնդրի շուրջ տե՛ս The Crisis Years: the 12th Century B. C. From Beyond the Danube to the Tigris (eds. W. A. Ward and M. S. Joukowsky), Dubuque, 1992 ժողովածուում գետնդրված հոդվածները, ինչպես նաև M. Liverani. The Collapse of the Near Eastern Regional System at the End of the Bronze Age: the Case of Syria.—In: Center and Periphery in the Ancient World (eds. M. Rowlands, M. Larsen and K. Kristiansen), Cambridge, 1987, pp. 66—73; Ա. Վ. Քոսյան. Իսուվան (Մոփրը) մ. թ. ա. XIII—XII դդ.— «Պատմա-բանասիրական հանդես», 1997, № 1—2, էջ 177—192; նույնի՝ մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեոնաշխարհը. Երևան, 1997 (դոկտորական ատենախոսության սեղմագիր); նույնի՝ Кризис XII в. до н. э. этнические передвижения и депопуляция—Вестник общественных наук, 1998, № 3, с. 45—52.

⁷ J. H. Breasted. Ancient Records of Egypt. Historical Documents from the Earliest Times. Vol III, Chicago, 1927, p. 241ff.

⁸ Idem, pp. 574—617.

բար, այստեղ կարելի է խոսել միայն նախորդող փուլում պաղեստինյան և քանադանյան քաղաքների ապստամբությունների մասին: Սերենպտահը գրավված քաղաքներում տեղադրեց եգիպտական կայազորներ և ամրաշինական աշխատանքներ կատարեց: 1. Զինվորի կարծիքով, այս միջոցառումների նպատակը Եգիպտոսից միջերկրածովյան առափնյա գոտով դեպի Փոքր Ասիա տանող ճանապարհի անվտանգության ապահովումն էր: Հեղինակի կարծիքով, Սերենպտահը վերացրել է Աշկելոնի ինքնավար կարգավիճակը, իսկ գրավված քաղաքները՝ Գազան, Աշկելոնը, Աշդոզը, Սահալը, Յաֆֆան, Ափեկը վերածվել են ծովափով անցնող մայրուղու մատակարարման բազաների⁹:

Ակնհայտ է, որ Սերենպտահի օրոք Եգիպտոսի դիրքերը կենսական մեծ նշանակություն ունեցող Պաղեստինում և Քանաանում արդեն լրջորեն սասանվել էին: Փարավոնին հաջողվեց կայունացնել խրամակները, սակայն նրա մահից հետո Եգիպտոսում սկսվեց քաղաքական խոր ճգնաժամ, որը տևեց շուրջ քսան տարի¹⁰: Այս վերջին հանգամանքը ստիպում է ենթադրել, որ Սերենպտահի վերստիշյալ հաջող արտաքին քաղաքական ձեռնարկումները դժվար է համատեղել բարգավաճող պետության մասին ենթադրության հետ: Նրա մղած պատերազմների իրական դրդապատճառները շատ ավելի խորն են, քան կարող է թվալ սկզբնաղբյուրների ձևական վերլուծության հիման վրա:

Այժմ անցնենք ենթական տերությունը: Մինչև 1980-ական թթ. երկրորդ կեսը խաթիի վերջին արքա Սուպպիլուլիումաս II-ի կառավարման մասին շատ քիչ բան էր հայտնի: Արտաքին քաղաքական ձեռնարկումները սահմանափակվում էին Կիպրոսի (խեթական Ալասիա) փերին մղած ծովային ճակատամարտով (ենթադրաբար, «ծովի ժողովուրդների» դեմ)¹¹ և վերինեփրատյան գոտում կազմակերպած արշավանքով. վերջինիս մասին պատմող KBo IV 14 տեքստի վերագրումը Թուդխալիյաս IV-ին¹² ստիպում էր ենթադրել, որ Սուպպիլուլիումասը պետության փլուզման նախօրեին ի վիճակի չէր զբաղվելու ակտիվ արտաքին քաղաքականությամբ:

Սակայն 1986 թ. Իռլանդիայում հայտնաբերված Südburg կոչվող հիերոգլիֆային արձանագրությունը արմատապես փոխեց մեր պատկերացումները այս արքայի արտաքին քաղաքական գործունեության մասշտաբների վերաբերյալ¹³: Պարզվում է, որ, բացի վերը նշված կիպրոսյան արշավանքից, Սուպպիլուլիումաս II-ը պատերազմներ է մղել նաև այլ ուղղություններով: Արքան հիշատակում է հարավային Փոքր Ասիայում գտնվող Թարխունտասսա

⁹ I. Singer, Merneptah's Campaign to Canaan and the Egyptian Occupation of the Southern Coastal Plain of Palestine in the Ramesside Period—Bulletin of the American Schools of Oriental Research 269, 1988, p. 3.

¹⁰ Երկրում սկսվեց դինաստիական պայքար և մեկը մյուսի ևտեից կառավարեցին շորս փարավոններ՝ Սեթի II-ը, Ամենմեսը, Սապտախը և Թագուհի Թաուրեթը: Եգիպտոսում տիրող քաղաքական բառուսի և քաղաքացիական պատերազմի մասին է վկայում այսպես կոչված «Հարրիսի պապիրուսը». «Եգիպտական երկիրը արհամարհված էր, ամեն մեկը զբաղված էր իրենով: Սկզբում, մինչև այլ ժամանակները, նրանք շունեին ղեկավար և եգիպտական երկիրը (ներկայացված էր) աստիճանավորներով և քաղաքների կառավարիչներով, և մեկը սպանում էր մյուսին՝ թե՛ աղնվազարմները, թե՛ աղբատները» (հղվում է ըստ История древнего Востока. т. I [под ред. Г. М. Бонгард-Левина], М. 1988, с. 561с.):

¹¹ G. Steiner, Neue Alasija-Texte, Kadmos 1, 1962, S. 130—138; H. G. Güterbock, The Hittite Conquest of Cyprus Reconsidered, Journal of Near Eastern Studies 26, 1973, p. 73ff.

¹² I. Singer, Zeitschrift für Assyriologie 75, 1985, p. 100ff.

¹³ Արձանագրության տեքստի հրատարակությունը տե՛ս J. D. Hawkins, The New Inscription from the Südburg of Bogazkoy-Hattusa, Archaologische Anzeiger 3, 1990, p. 308ff. (տեքստի նոր հրատարակությունը՝ J. D. Hawkins, The Hieroglyphic Inscription of the Sacred Pool Complex at Hattusa (SÜDBURG). Wiesbaden, 1994, p. 21ff.).

քույր-պետություն, ինչպես նաև Լուկկայի, Տամինայի, Սասայի, Վիյանավանդայի և Իկունայի նվաճման մասին: Լուկկան գտնվել է Փոքր Ասիայի հարավարևմուտքում¹⁴, Իկունան անտիկ շրջանի Իկոնիոնն է¹⁵, Վիյանավանդան՝ անտիկ աղբյուրների Oenoandus-ը¹⁶ կամ Oinoanda-ն¹⁷: Տամինան առայժմ չի տեղագրվում: Վերոհիշյալ երկրների աշխարհագրությունը վկայում է այս սասին, որ խաթիթիլն ենթակա վիթխարի տարածաշրջանում (հարավային, կենտրոնական և արևմտյան Փոքր Ասիա) սկիզբ էին առել բացահայտ անջատողական միտումներ: Նպատակահարմար կլիներ նշել, որ Սուպիլուլիումասի հոր՝ Թուդխալիյաս I-ի օրոք գրեթե բոլոր նշված երկրները արդեն զբր-սևորում էին նման միտումներ: Այսինքն, այս պարոպեսը սկսվել էր գեո մ. թ. ա. XIII դարի կեսերից: Սիսամասակ անհրաժեշտ է նշել նաև այն, որ խեթական արքայի հակառակորդները չէին կարող լինել «ծովի ժողովուրդները» տեղաշարժային ալիքների կրողները: Թեթևս միայն Լուկկայի և Կիպրոսի առնչությունը հնարավոր է պնդել «ծովի ժողովուրդների» մասնակցությունը: Սուպիլուլիումասի լայնամասշտաբ ձեռնարկումները, անկասկած, խեթիկյան ընդարձակ տերություն ծայրամասային, նաև՝ բնօրրանին ավելի մոտ գտնվող կախյալ երկրների անջատողական քաղաքականության դեմ էին ուղղված: Կախյալ երկրների անհնազանդությունը Սուպիլուլիումասի առջև ծառայած միակ լուրջ խնդիրը չէր: Գրավոր աղբյուրները վկայում են սեփական բնակչության անհնազանդության մասին¹⁸: Այս պայմաններում իրադրության սրմանը, անկասկած, պիտի նպաստեր երկրում սկսված տեղական երաշտը, որը ստիպում էր մեծ քանակությամբ հացահատիկ ներմուծել Եգիպտոսից¹⁹:

Ամփոփելով խեթական տերությունը նվիրված մասը, անհրաժեշտ է նշել, որ, չնայած այսօր ոչևէ կերպ հնարավոր չէ վերականգնել Սուպիլիումասի I-ի կառավարման եզրափակիչ փուլի իրադարձությունները, այսուհանդերձ, արդեն մ. թ. ա. XII դարի խաթիթի տարածքի մի զգալի մասում խեթական պետականության շարունակականության փաստը ի դեմս հարափոքրասիական Թարխունտասայի, հյուսիսսիրիական Կարգամիսի, Մելիդի և այլ պետական կազմավորումների, թույլ է տալիս առաջարկելու դրա տրոհումը մի քանի պետությունների²⁰: Այժմ փորձենք ի մի բերել Ասորեստանի,

14 O. R. Gurney. Hittite Prayers of Mursili II, *Annals of Archaeology and Anthropology* 27, 1940, p. 102; Ph. H. J. Houwink ten Cate. *The Records of the Early Hittite Empire* (c. 1450—1380 B. C.). Leiden, 1970, p. 72f (այլ տեղագրությունների համար տես G. F. del Monte und J. Tischler. *Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte* (RGTC 6) Wiesbaden 1978, S. 249f.):

15 Fr. Cornelius. *Zur hethitischen Geographie: die Nachbarn des Hethiterreiches.*—*Revue Hittite et Asiatique* XVI/62, 1958, S. 388.

16 E. Forrer. *Forschungen* 1,2, Berlin, 1926, S. 68.

17 F. Kinl. *Geographie et l'Histoire des Pays d'Arzawa.* Ankara, 1953, p. 21.

18 Արձանագրություններից մեկում (ABOT 56) խոսվում է այն մասին, որ խաթիթի ժողովուրդը այլևս հաշվի չի նստում մահացած արքաների հողերին նվիրված կավածքների անձեռնմխելիության սովորույթի հետ: Մեկ այլ տեքստում (KUB XXVI 32) փայտի վրա գրիչների գլխավորը երգվում է արքային իր հավատարմության մեջ, ինչ էլ որ լինի:

19 H. Klengel. «Hungerjahre» in Hatti. *Altorientalische Forschungen* I, 1974, S. 167ff.

20 Վերջին տասնամյակում ձևավորվել է խեթական տիրության անկման այսպես կոչված «տրոհման» տեսությունը, որը այսօր մեծ թվով կողմնակիցներ ունի (J. Mellaart. *Troy VIIA in Anatolian Perspective.*—In: *The Trojan War. Its Historicity and Context.* Papers of the First Greenbank Colloquium, Liverpool, 1981 (eds. L. Foxhall and J. K. Davies). Bristol, 1984, 71ff.; I. Singer. *Dating the End of the Hittite Empire.* «*Hethitica*» 8, 1987, p. 413ff.; J. D. Hawkins. *Kuzi-Tesub and the «Great Kings» of Karkamis.* *Anatolian Studies*, 38, 1988, p. 99ff.; *The End of the Bronze Age in Anatolia: new*

Եգիպտոսի և հաթթիի վերաբերյալ վերահիշյալ դիտարկումները, Դրանց համադրումը բացահայտում է մի շարք կարևոր շփման եզրեր:

1) Նվաճված երկրների դերակշիռ մասը նախորդող փուլում արդեն գտնվել է տվյալ պետության տիրապետության տակ: Այսփնքն, խոսք չի կարող լինել նոր տարածքների գրավման մասին: Արքաները պայքարում էին հանուն իրենց պետությունների բուն տարածքի կամ անվիճելի քաղաքական ազդեցության տակ գտնվող երկրների լոյալության վերականգնման համար²¹:

2) Արքաների հաջողությունները նվաճված երկրներում անցողիկ էին: Արշավանքներից մի քանի տարի անց դրանք գրեթե ամբողջությամբ դուրս եկան կախյալ կարգավիճակից: Այսպես, Մերենպտահից հետո Եգիպտոսը կաաստորեն չէր վերահսկում իրավիճակը Պաղեստինում և Քանաանում²²: հաթթիի կորցրեց իր բոլոր արևմտափոքրասիական տիրույթները և Ալասիան, Թուկուլթի-Նինուրտան կարողացավ պահել Բաբելոնիան ընդամենը 7 տարի²³:

3) Ուսումնասիրվող շրջանում Ասորեստանում, Եգիպտոսում և հաթթիում տիրել է ծայրաստիճան անկայուն ներքաղաքական իրավիճակ: Վկայությունը՝ Թուկուլթի-Նինուրտայի և ասորեստանյան աղնվականության անվերջ պայքարը, առաջինի մեկուսացումը նորաստեղծ մայրաքաղաք Կար-Թուկուլթի-Նինուրտայում և սպանությունների մասին արդեն նշվեց վերը: Չնայած առայժմը հնարավոր չէ մատնանշել որևէ փաստ Եգիպտոսում Մերենպտահի օրոք նկատվող նմանօրինակ երևույթների առկայության մասին, սակայն, նրանից հետո երկրում սկսված շուրջ քսանամյա ներքաղաքական քաոսն արդեն իսկ սիմպտոմատիկ է: Հազիվ թե հնարավոր լինի պնդել, որ «Հարրիսի պապիրուսում» ներկայացվող իրավիճակը (տե՛ս վերը, ծանոթ. 10) կարող էր տեղ գտնել Մերենպտահից հետո՝ մեկ-երկու տարվա ընթացքում: Դա պիտի լիներ տասնամյակներ տևած քայքայիչ գործոնների խորացման հետևանք: Որոշ կցկտուր տեղեկությունների հիման վրա կարելի է եզրակացնել, որ արդեն Ուամզես II-ի կառավարմա վերջին շրջանում և Մերենպտահի օրոք երկրում

light from Recent Discoveries.—In: Anatolian Iron Ages. 3. The Proceedings of the Third Iron Ages Colloquium held at Van, 6—12 August 1990 (A. Cilingeroglu and D. H. French). London, 1944, p. 91ff.; J. Y a k a r. Anatolian Civilization Following the Disintegration of the Hittite Empire: an Archaeological Appraisal, Tel Aviv 20, 1993, p. 3ff. ալևն):

21 Ասորեստանի պարագայում չի կարելի միանշանակ հայտարարել, որ հյուսիսում Թուկուլթի-Նինուրտան վերահպատակեցնում էր հոր՝ Սալմանասար I-ի կողմից արդեն նվաճված երկրները: Այստեղ Թուկուլթի-Նինուրտայի գործունեությունը անվիճելիորեն ավելի լայն տարածք էր ընդգրկում: Սակայն վերահիշյալ երկու արքաների արշավանքների նպատակակետերը, եթե չհաշվենք «Նաիրի երկրները», հիմնականում նույնն են:

22 J. Weinstein. The Collapse of the Egyptian Empire in the Southern Levant.—In: The Crisis Years, pp. 142ff.

23 Թուկուլթի-Նինուրտայի տիրապետության շրջանի ավարտական փուլում Բաբելոնիայի կախյալ կառավարիչ Ադադ-շումա-իդդինան (գահազրկված Կաշտիլիաշ IV-ի որդին) ապստամբեց և նույնիսկ ռազմական գործողությունները փոխադրեց Ասորեստանի տարածք՝ ասպատակելով Աշշուրի շրջակայքը (J. A. Brinkman. A Political History of Post-Kassite Babylonia (1158—722 B. C.). Roma, 1968, p. 87): Ինչ վերաբերում է նախկին Միտաննիի տարածքին, ապա կարծիք է հայտնվել, որ Սալմանասար I-ի և Թուկուլթի-Նինուրտա I-ի արշավանքների ընթացքում տեղի խուրրիական արքայատոհմի իշխանությունը կարող էր պահպանվել երկրի որոշ տարածքների նկատմամբ (G. Wilhelm. The Hurrians. Warminster, 1989, p. 40f.): Եթե դա իրոք այդպես է, ապա, նշանակում է, Ասորեստանի վերահիշյալ արքաների տեքստերում հաղորդվող տեղեկությունները Միտաննիի համատարած ավերման և հպատակեցման մասին որոշակիորեն շփազանցված են:

24 J. Munn-Rankin. In: Cambridge Ancient History II, ch. XXV, p. 21.

սկիզբ էր առել պայքար Ստորին և Վերին Եգիպտոսների քաղաքների միջև, ինչպես նաև նկատվում էր Եգիպտոսի ջրի մակարդակի նվազում²⁵։

4. Մ. թ. ա. XII դարի սկզբներին հաթթին տրոհվեց, իսկ Ասորեստանում և Եգիպտոսում սկսվեց շուրջ 250 տարի տևած քաղաքական անկման փուլը, որն ընդմիջվեց միայն Եգիպտոսում Ռամզես III-ի, իսկ Ասորեստանում՝ Քիգլաթպալասար I-ի և Աշշուբեբիկալայի՝ իրավիճակը կայունացնելու փորձերով։

Փորձենք ի մի բերել վերոհիշյալ համապատասխանությունները և պարզել, թե ինչպես կարելի է բացատրել Ասորեստանի, Եգիպտոսի և հաթթիի՝ նշված արքաների ակտիվ գործունեությունը սահմանային գոտիներում՝ Եգիպտոսի քաղաքական խիստ անկայուն իրավիճակի պայմաններում՝ այս պետությունների քաղաքական վայրէջքից քիչ առաջ։

Հոդվածի սկզբում նշվեց մ. թ. ա. XII դարի ճգնաժամի հիմնական դրսևորումների մասին, որոնց շարքում հատկապես նկատելի է առաջատար պետություններում կենտրոնական իշխանության թուլացման միտումը։ Վերջինս հատկապես լավ է վկայված հաթթիում։ Մ. թ. ա. XIII դարի խեթական գրեթե բոլոր արքաներին դժվարություններ էր հաջողվում կանխել ծայրամասային կախյալ երկրների անջատողական միտումները, որոնք լրացուցիչ լիցք էին ստանում խեթերի ավանդական հակառակորդների աջակցության շնորհիվ (օրինակ՝ Ասորեստանի կամ Ախխիյավայի)²⁶։ հաթթիի փաստական տրոհման սկիզբը դրեց հաթթուսիլիս III-ը, որը դեռ 1260-ական թթ. Փոքր Ասիայի հարավում ստեղծեց արտակարգ լիազորություններով օժտված Թարխունտասսայի քույր-պետությունը²⁷։ հաթթիի հետագա ողջ պատմությունը ուղեկցվեց Թարխունտասսայի հետ բացահայտ առճակատմով (քաղաքացիական պատերազմ, ապստամբություններ և այլն)։

Ավարտելով մեր հետազոտության առաջին մասը, փորձենք անցնել դրանից բխող եզրակացություններին։ Նվ այսպես, ինչն էր ստիպում Առաջավոր Ասիայի երեք խոշորագույն պետությունների արքաներին ակտիվ ուղղված գործողություններ ծավալելու իրենց քաղաքական, տնտեսական և մշակութային ազդեցության գոտի հանդիսացող շրջաններում կամ դրանց անմիջական հարևանությամբ՝ գրեթե միաժամանակ բոլոր ուղղություններով։ Հարցը մասնավորապես Ասորեստանի օրինակով։

Մեր կարծիքով, Թուկուլթի-Նինուրտա II-ի՝ հոդվածի սկզբում հղված երկու հաղորդումները դեպի Շուբադի երկրներ կազմակերպած արշավանքների դրդապատճառները մասին, պետք է ընդունել որպես իրականություն, այն ոչ Ասորեստանի արքայի կողմից իր նվաճումներն արդարացնելու պատրվակ, ինչպես Կարթագենի քաղաքների բնակիչների հարձակումների և Շուբադի երկրների՝ Քաշիյարի լեոններից մինչև Ալզի միավորման մասին է։ Հայկական լեոնաշխարհի հարավային և արևմտյան շրջանների՝ նախկինում հաթթիից և Ասորեստանից կախյալ երկրների բացահայտ անջատողական քաղաքականության օգտին է վկայում ևս մեկ իրադարձություն։

Մ. թ. ա. 1234/3 թ. Նիխրիյայի²⁸ մոտ տեղի ունեցած խեթա-ասորեստանյան պատերազմի մասին տեղեկությունները հետևյալն են։

25 История Древнего Востока, т. I, с. 561.

26 Այս մասին տես, մասնավորապես, T. R. Bryce. The Nature of Mycenaean Involvement in Western Anatolia, Historia, Bd. XXXVIII, 1989, H. 1, p. 1ff.:

27 Թարխունտասսայի առաջին արքան դարձավ Կուրունտան՝ հաթթուսիլիսին նախորդած արքա Ուրիսի-Թեշուբի որդին, որով խեթական արքայատոհմը երկփեղկվեց. այս մասին տես Քուրտալիյաս IV-ի և Կուրունտայի միջև կնքված պայմանագրի նորահայտ տեքստը՝ «Բրոնզե տախտակը» (H. Otten. Die Bronzetafel aus Bogazkoy: Ein Staatsvertrag Tuthaliyas IV (StBot, Beiheft I), Wiesbaden, 1988, II 57ff.

28 Նիխրիյան մասնագիտական գրականության մեջ սովորաբար նույնացվում է Արմենի կենտրոնական քաղաք Նիխրիանիի հետ և տեղադրվում Դիարբաքրից հյուսիս-արևելք՝ հին հայ-

տանյան ճակատամարտից անմիջապես հետո խեթական զորավարը նամակ է հղում թագուհի-մորը՝ Պուդուխեպային, որտեղ հայտնում է հետևյալը²⁹,

«[...] երբ ես գա այստեղ [...] եանից մենի կհարձակվեն նրա վրա: Բայց [այժմ, երբ Խուվայի արևան եկավ այստեղ, նրան նրան շրջեցին: [Եվ] սա նույնպես ընկղմվեց(») աստաստության մեջ: Խուվայի արևան այլևս չի հետևում Արևին: Խուլ թագուհին՝ իմ տիրուհին նույնպես առնելու է, Տիրուհիս՝ թագուհիս, ինչ պրտի անեմ սա: Արևը՝ այս տեղում (պարտազայում—Ա. Ք.)] Արցա[վա երկրում...]:»

Վերը հղված տեքստում ներկայացված իրադարձությունների մեկնաբանությունը դժվար չէ: Ըստ Ասորեստանի դեռ ձեռնարկված արշավանքի ծրագրի, Խուվայի արքա էխլի-շարրուման պիտի իր զորքով միանար խեթերին և անսպասելի, թիկունքից հարվածելով վճռոր ճակատամարտի ելքը: Սակայն Խուվայի արքան, միանալով ինչ-որ հակախեթական ուժերի, կորցրել է իր լույսաբերությունը հաթթիի արքայի հանդեպ: Չնայած տեքստը թույլ չի տալիս սրտշելու, թե ում էր միացել Խուվայի արքան, սակայն այստեղ կարևորն այն է, որ նա այլևս չէր համարվում հաթթիի արքայի դաշնակիցը:

Նիխրիայի ճակատամարտի փուլում Խուվայի անջատողական դիրքորոշումը փորձ է արվել մեկնաբանել որպես զգուշավորություն Ասորեստանի հանդեպ, որն այդ պահին ձեռնարկել էր լայնածավալ գրոհ Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններում³⁰: Սակայն խնդրի նման մեկնաբանություն հետ, թերևս, դժվար է համաձայնվել:

Այս առնչությամբ անհնար է շրջանցել այն հանգամանքը, որ Խուվայի արքայատոհմը սերտ ազգակցական կապերի մեջ էր խեթական արքայատոհմի հետ. էխլի-շարրումայի մայրը հաթթուսիլիս III-ի դուստրն էր³¹: Խուվայի դիտվում էր որպես խեթերի առավել կարևոր դաշնակիցներից մեկը, ինչպես: Սեխա գետի երկիրը արևմտյան Փոքր Ասիայում և Ամուրոն ու Ուգարիտը Սիրիայում: Խուվան հաթթիի գլխավոր հենարանն էր արևելքում, նրա ասորեստանյան քաղաքականության հենակետերից մեկը՝ Կարգամիսի հետ:

Խուվայի խեթամետ դիրքորոշման ավարտը ժամանակագրորեն ճշգրիտ համընկնում է Շուբարի երկրների ստեղծած հակասորեստանյան դաշինքի մասին Թուկուլթի-Նինուրտա II-ի հաղորդմանը և այս հանգամանքը լուրջ մտորումների տեղիք է տալիս: Ինչպիսի՞ քաղաքական հաշվարկներով էին առաջնորդվում մի կողմից Խուվան, մյուս կողմից՝ շուբարյան երկրները՝ Ալզին, Կարգամիսի և այդ դաշնակցության մյուս անդամները: Ի՞նչը կարող էր ստիպել ավանդաբար խեթամետ դիրքորոշում ունեցող Խուվային հարել Ասորեստանին, այն դեպքում, երբ Խուվայի և Ասորեստանի միջև ընկած էր շուբարյան երկրների հոծ շղթան: Նմանապես, որևէ հիմք չունենք խեթամետ դիրքորոշում վերագրելու շուբարյան երկրներին: Թվում է, որ սովյալ պարագայում կարելի է ենթադրել նախկին կախյալ երկրների միջև սեպարատ հարաբերությունների ձևավորում: Մետրոպոլիաների թուլացման պայմաններում սա բնական էր, մանավանդ որ սույն ժամանակաշրջանում նման երկվայթներ արդեն վկայված են:

կական նիխրիտի տեղում (ժամանակակից Սիլվան) (H. B. Arutyunyan. Топонимика Урарту. Ереван, 1975, с. 155), շնայած կա մեկ այլ, ավելի քիչ տարածված տեսակետ, ըստ որի այն պիտի տեղադրել ավելի հարավ՝ Խարուրի կամ Բալիսի վերին հոսանքների շրջանում (տե՛ս M. Falkner. Studien zur Geographie des alten Mesopotamien.—Archiv für Orientforschung 18, 1958, S. 20ff.):

²⁹ Keilschrifturkunden aus Boghazkor, VIII 23 13'-14'.

³⁰ I. Singer. Zeitschrift für Assyriologie 75, 1985, p. 118.

³¹ H. G. Güterbock. Hittite Hieroglyphic Seal Impressions from Korucutepe.—JNES 32, Nos. 1/2, p. 139ff.

Այսպես, հայտնի է Թուկուլթի-Նինուրտաչի նամակը՝ ուղղված Ուգարիտի արքա Ամմուրապիին³², գրված Նիխրիչայի ճակատամարտից որոշ ժամանակ անց: Ասորեստանի հետ ընդհանուր սահմաններ շունեցող և խեթերի անմիջական հսկողության տակ գտնվող Ուգարիտի արքային նման նամակ ուղարկելու փաստն արդեն իսկ վկայում է հավատարիմ համարվող կախյալ կառավարչի անջատողական միտումների մասին:

Կախյալ կառավարիչների անջատողական միտումների մեկ այլ դրսևորում է վկայված խեթասպատակ Ամուրրուի արքային ուղղված Ուգարիտի դեսպան Պարծուի նամակում³³: Վերջինս ուղղակի ասում է, որ Ամուրրուն և Ուգարիտը միասին պիտի պայքարեն ընդհանուր թշնամու դեմ (հավանաբար, «ծովի ժողովուրդների»)՝ տեքստում որևէ ակնարկ չկա երկու երկրների սյուղերեն խաթիի մասին:

Այսպիսով, վերը բերված նյութերը թույլ են տալիս հանգելու հետևյալ եզրակացության: Ուսումնասիրվող ժամանակահատվածում առաջավորասիական տարածաշրջանում ակնհայտորեն նկատվում է խոշոր պետությունների վարչաքաղաքական կառույցների խարխուլում, որն արտահայտվում էր առաջին հերթին ծայրամասային կախյալ երկրների անջատողական քաղաքականության մեջ: Այդ պրոցեսի ողջ խորությունը արժեքավորելու համար անհրաժեշտ է հաշիվի առնել հետևյալ հանգամանքը:

Մ. թ. ա. XIV դարում—XIII դարի առաջին կեսի ընթացքում առաջավորասիական աշխարհաքաղաքական տարածաշրջանում ձևավորվել էր ռիթիշատ կայուն մի համակարգ, որը վերջնականապես հաստատագրվեց մ. թ. ա. 1258 թ. խեթա-եգիպտական դաշնագրով: Փոքր Ասիայի, Սիրիայի, Պաղեստինի և Փյունիկիայի մի օսնի տասնյակ խոշոր և մանր քաղաքական միավորները գտնվում էին երկու գերտերությունների՝ խաթիի և Եգիպտոսի անմիջական բերեղխանութան նամ օսոսական աբսոլյուտիզմի նեոթո: Մետոպոլիտան հետ կախյալ երկրների հարաբերությունները կարողացան լինել անաշխատեղծ: Ասորեստանի աստիճանական էապես այս էր: Վերջինս միայն մ. թ. ա. XIV դարի մեծերից մտավ մեծ քաղաքականության ոլորտ, երբ ռեյի ստեղծումը և հուսիս ընկած հումոսի աղբյուրները և առևտրական ուղիները արդեն վերահսկվում էին խաթիի և Եգիպտոսի կողմից: Ասորեստանի ռազմաքաղաքական էքսպանսիայի առաջին լուրջ դրսևորումը Սայմանասուր I-ի ռոթոնեությունն էր, որը, սակայն, սկառողստավ նայուն գերիշխանություն հաստատել արևմուտքի և հուստեսի նկատմամբ: Փաստորեն, Սայմանասուր I—Թուկուլթի-Նինուրտա I ժամանակահատվածը համընկավ խաթիի և Եգիպտոսում արդեն սեսուած ներքաղաքական ճգնաժամի առաջին դրսևորումների հետ: Այսինքն, Ասորեստանը ձգտում էր իր գերիշխանությունը հաստատել այն երկրների նկատմամբ, որոնք իրենք էին փորձում դուրս գալ խեթերի և եգիպտացիներից: Կասկածից մեր է, որ, օտենակ, շուրաբյան երկրները և Իսուվան չէին կարող դերադասել Ասորեստանի կողմից բացահայտ ուժայեղ միջոցներով ուղեկցվող գերիշխանության հեռանկարը խաթիի «քաղաքակիրթ» տիրապետությունից: Տարածաշրջանում խեթական տերության հավասարակշռող ռեթի նվաղումը պիտի ստիպեր վերինեգիպտյան երկրներին գտնելու իրենց ինքնուրույն կենսադրոթունությունների ասպահովման ուղիներ լինչպես Իսեթերի, այնպես էլ Ասորեստանի նկրտումների դեմ: Առավել նպատակահարմարը տվյալ պարագայում նախկին կախյալ երկրների միջև դաշնակցային

³² S. Lackenbacher. Op. cit., p. 141ff.

³³ RS 20. 162 (տե՛ս G. A. Lehmann. Der Untergang des hethitischen Grossreiches und die neuen Texte aus Ugarit. Ugarit-Forschungen Bd. 2, 1970, S. 53): Հայտնի է նաև Ուգարիտի արքա Ամմուրապիի նամակը, հավանաբար, ուղղված Ամուրրուի արքային (RS 18. 75. տե՛ս M. C. Astour. The Last Days of Ugarit. American Journal of Archaeology. Vol. 69, 1965, p. 256), որտեղ նույնպես առկա են նման անջատողական երանգներ:

հարաբերությունների հաստատումն էր, մի գործընթաց, որը, ինչպես ցույց տրվեց վերը, ծավալվում էր հաթթիի և Ծգիպտոսի, հաթթիի և Ասորեստանի ազդեցության գոտիների շփման կետերում: Վերջինիս անմիջական հետևանքը ողջ առաջավորասիական-էգեյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի բաղկացուցիչ մասերի միջև նախկինում հաստատված կաշուն փոխհարաբերությունների անկման գործընթացն էր: Մետրոպոլիա-ծայրագավառ հարաբերությունների խզումը, անկասկած, կարող էր ծանր հարված հասցնել խոշոր տերությունների կենսագործունեությանը, թեկուզ տնտեսական առումով: Այս երևույթը պիտի արտահայտվեր 1) վերահսկվող տարածքների մարդկային և նյութական ռեսուրսների կորստյամբ, 2) այդ երկրներում գտնվող հումքի օգտվելու անհնարինությունով, 3) ուղբերգեղաբարյան զարգացած միջտարածաշրջանային առևտրի անկումով: Նշված բաղադրական երևույթների ոչ լրիվ թվարկումը արդեն իսկ վկայում է մ. թ. ա. XIII դարի երկրորդ կեսի ընթացքում Առաջավոր Ասիայում և էգեիդայում սկսված վայրենիաց պրոցեսի խորության մասին, որը դարավերջին պիտի հասցնեք խոշոր աղետի:

Ասորեստանի համար վերահիշյալ պրոցեսը նշանակում էր հյուսիսի՝ Հայկական լեռնաշխարհի՝ մետաղներով հարուստ երկրների նկատմամբ ակնկալվող, սակայն միայն սաղմնային միճակում գտնվող առանց այդ էլ խարխուլ վերահսկողության կորուստ: Բացի այդ, արամեական գեղերի տարեցտարու ռազմապետական տեղաշարժային այիքները փաստորեն կամավածահար էին արել կապո արևմուտքի սիրիա-պաղեստինյան տարածաշրջանի հետ:

Ամփոփելով հոդվածը, անհրաժեշտ է նշել հետևյալը: Ժամանակաշրջանի պատմության յայն բտնախորոհ վրա Թուկուլթի-Նինուրտա I-ի հյուսիսային արդամանքներ ահտհ համարել ծայրաստիճան ծանր քաղաքական և տնտեսական իրավիճակում հալտնված պետության փորձ կաշունացնելու այն: Ասորեստանի արքայի առջև կանգնած էր ծանր միճակում հայտնված պետության գոյությանը սպառնացող տնտեսական աղետը ուժերի գերագույն յարումով կանխելու խնդիրը: Այդ մասին կարող է անուղղակի վկայել թեկուզ այն փաստը, որ հյուսիսում Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններում և դրա մատուցներում կազմակերպված արդամանքը ըստ էության ուղղված չէր որևէ կոնկրետ քաղաքական միավորի դեմ: Այն բաղկացած էր տարբեր ուղղություններով ընթացող մի շարք ինքնուրույն ռազմական ձեռնարկումներից, բոլորը միևնույն՝ Ասորեստանի արքայի կառավարման առաջին տարում: Թե որքան հիմնավոր էին Թուկուլթի-Նինուրտայի հաջողությունները այս տարածաշրջանում, կարելի է միայն եզրակացնել նրա կառավարման հետագա շրջանի իրադարձությունների բտնախորքի վրա, որը, ինչպես նշվեց վերը, ընթանում էր տարեցտարի խորացող ձգնաժամին հատուկ հոնով: Այնպես ինչպես Մերենպտահին և Սուպպիլուիումաս II-ին ուժային մեթոդներով հաջողվեց ժամանակավորապես կանխել Ծգիպտոսի և հաթթիի նորմալ կենսագործունեությանը սպառնացող բացասական երևույթները, Թուկուլթի-Նինուրտա II-ի հաղթանակները հյուսիսում պիտի համարել Ասորեստանի ռազմաքաղաքական մեքենայի նույնպիսի կարճատև հաջողություն:

АССИРИЯ И СТРАНЫ АРМЯНСКОГО НАГОРЬЯ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIII ВЕКА ДО Н. Э.

Доктор истор. наук АРАМ КОСЯН

Резюме

Статья посвящена проблеме «кризиса XII века до н. э.», его влиянию на три ведущие державы древнеближневосточного геополитического региона—Ассирию, Египет и Хеттскую империю. Анализ некоторых аспектов внешней политики указанных государств показывает, что по крайней мере с середины XIII в. до н. э. в большей

части подвластных им стран видны четкие следы проявления сепаратистских тенденций. Это являлось результатом деградации политической, экономической и социальной структуры ближневосточных империй. Усилия Тукульти-Нинурты I, Меренптаха и Суппилулиумаса II, направленные на предотвращение этого процесса, имели лишь только временный успех.

ASSYRIA AND THE COUNTRIES OF THE ARMENIAN HIGHLAND
IN THE SECOND HALF OF THE XIII CENTURY B. C.

Doctor of Hist. sc. ARAM KOSSIAN

S u m m a r y

The paper deals with the problem of the «XII c.B.C. crisis», its impact upon three great powers of the ancient Near Eastern geopolitical region, namely Assyria, Egypt and the Hittite Empire. The analysis of several aspects of their foreign policy shows that at least after the mid-XIII c.B.C. in most of tributary states and dominions clear traces of separatism were apparent. This was the result of the degradation of political, economic and social structure of Near Eastern empires. The efforts of Tukulti-Ninurta I, Merenptah and Suppiluliumas II, aimed to prevent this process, had had only a temporary success.